ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2017 թվականին նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացի վերլուծության արդյունքները

ԵՐԵՎԱՆ 2018

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախաբան……..**3**

Բաժին 1. Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացի ընդհանուր նկարագիրը և ներկայիս վիճակը ……**4**

Բաժին 2. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2017 թվականի ընթացքում նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման ժամկետների վերլուծություն……**7**

2.1 Էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի կնքման գործընթացի վերլուծություն……**8**

2.2 Փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովելու գործընթացի վերլուծություն……**12**

Եզրակացություններ և առաջարկություններ……**19**

Հղումներ օգտագործված նյութերին ……**21**

ՆԱԽԱԲԱՆ

Սույն վերլուծական տեղեկանքը կազմվել է ի կատարումն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) 2018 թվականի աշխատանքային ծրագրի **[Որոշում 1]** 17-րդ կետի և արտացոլում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 2017 թվականի ընթացքում նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման (այսուհետ՝ նաև էլեկտրական ցանցին միացում) գործընթացի վերլուծությունը: Վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով 2018 թվականի փետրվարի 16-ի №04-ԱԱ-05/456 գրությամբ էլեկտրական ցանցին միացման գործընթացի վերաբերյալ Ընկերության ներկայացրած տարեկան տեղեկատվությունը **[Տեղեկատվություն 1]**:

Բաժին 1.

Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացի ընդհանուր նկարագիրը և ներկայիս վիճակը

Էլեկտրական ցանցին միացման գործընթացի բարելավման աշխատանքները մշտապես գտնվում են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի ուշադրության կենտրոնում: Այս ուղղությամբ հանձնաժողովը, համագործակցելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ, 2011 թվականից սկսած մի շարք փոփոխություններ է իրականացրել էլեկտրական ցանցին նոր սպառողների միացմանն առնչվող իրավական ակտերում, որոնք հիմք են հանդիսացել Համաշխարհային բանկի կողմից յուրաքանչյուր տարի հրապարակվող «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի «Էլեկտրական ցանցերին միացում» ցուցիչի մասով Հայաստանի Հանրապետության դիրքի բարելավմանը:

Մասնավորապես, 2017 թվականի ընթացքում հանձնաժողովի ընդունած որոշումներով պարբերաբար նվազեցվել են նոր սպառողների սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացնելու նպատակով միացման և մատակարարման պայմանագրեր կնքելու առավելագույն ժամկետները, հստակեցվել և կրճատվել են նոր սպառողների էլեկտրական ցանցին միացման գործընթացները:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը 2017 թվականի մայիսի 31-ին ընդունել է «Սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման, էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրերի օրինակելի ձևերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» №218Ն և «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» №220Ն որոշումները, որոնցով մեկ միասնական փաստաթղթում՝ սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրում են ներառվել սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի

մատակարարման գործընթացները, ինչը հնարավորություն է ընձեռել պարզեցնելու նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացը և կրճատելու դիմող անձանց և մատակարարի շփումը: Այս համատեքստում հարկ է նշել, որ տվյալ որոշումների ընդունման և դրանց արդյունքում «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի «Էլեկտրականության միացում» ցուցիչի մասով Հայաստանի դիրքի ակնկալվող բարելավման առնչությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝ Համաշխարհային բանկի աշխատանքային խմբին ուղղված գրությանն ի պատասխան ստացվել է տեղեկատվություն առ այն, որ նշված բարեփոխումները Հայաստանի դիրքի բարելավման վրա իրենց ազդեցությունը կունենան 2019 թվականի զեկույցի շրջանակում:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» №491Ն որոշմամբ կրճատվել են 0.4, 6(10), 35, 110 կՎ լարմամբ և կառուցվող բազմաբնակարան շենքերի կամ կառուցապատվող թաղամասերի սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման ժամկետները: Հարկ է նշել, որ տվյալ որոշումն ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարի 1-ից:

Նշվածի արդյունքում, 2018 թվականի Զեկույցի «Էլեկտրականության միացում» ցուցիչի մասով Հայաստանի Հանրապետության դիրքը բարելավվել է ևս 10 կետով՝ 76-ից բարձրանալով 66-րդ հորիզոնականը:

Էլեկտրական ցանցին միացման գործընթացի բարելավման աշխատանքները շարունակվել են նաև 2018 թվական ընթացքում, մասնավորապես, Հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 2-ի 140Ն որոշմամբ կրճատվել են նոր սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու սահմանված գործընթացների թիվը, մասնավորապես, սահմանվել են պարզեցված միացման դեպքերը, երբ դիմող անձի դիմումը ստանալուց հետո անմիջապես վերջինիս ներկայացվում է սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկ՝ մատակարարի կողմից ստորագրված պայմանագրի 2 օրինակի հետ միասին:

Տեղեկատվություն 1-ի ուսումնասիրության համաձայն, 2017 թվականի ընթացքում էլեկտրական ցանցին միացման արդյունքները գերազանցել են նախորդ 4 տարիների ցուցանիշները: Մասնավորապես, 2017 թվականի ընթացքում էլեկտրական ցանցին միանալու նպատակով ստացվել է 5 681 դիմում, ինչը 6%-ով գերազանցել է 2013-2016 թվականների առավելագույն ցուցանիշը (Գծապատկեր 1), և էլեկտրական ցանցին միացվել է 5 096 բաժանորդ, ինչը նույնպես գերազանցել է նախորդ 4 տարիների առավելագույն ցուցանիշը 10 %-ով (Գծապատկեր 2):

Գծապատկեր 1

2013-2017 թվականների ընթացքում էլեկտրական ցանցին միանալու նպատակով ստացված դիմումների քանակը



Գծապատկեր 2

2013-2017 թվականների ընթացքում էլեկտրական ցանցին միացված սպառման համակարգերի քանակը



ԲԱԺԻՆ 2.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2017 թվականի ընթացքում նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման ժամկետների վերլուծություն

Էլեկտրական ցանցին միացման գործընթացը կարգավորվում է Հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» №358Ն **[Որոշում 2]** և 2007 թվականի դեկտեմբերի 21-ի «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարները հաստատելու մասին» №659Ն **[Որոշում 3]** որոշումներով:

Տեղեկատվություն 1-ի վերլուծությունն իրականացվել է երկու փուլերի[1] համար.

1. էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի (այսուհետ նաև Պայմանագիր) կնքում,
2. փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովում:

Վերլուծության առաջին փուլում ուսումնասիրվել են դիմող անձանց Պայմանագիր կնքելու, իսկ երկրորդ փուլում՝ փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովելու ժամկետները, մասնավորապես՝

ա. դրանց համապատասխանությունը Որոշում 2-ով սահմանված ժամկետներին որոշելու,

բ. սահմանված ժամկետներից շեղումների պատճառները և դրանց վրա ուղղակի կամ անուղղակի կերպով ազդող գործոնները տարանջատելու:

[1] Վերլուծությանն իրականացվել է էլեկտրական ցանցին միացման դիմում ներկայացնելու պահին գործող կարգավորումներին համապատասխան: Մասնավորապես, մինչև 30.06.2017թ. դիմումների համար ուսումնասիրությունն իրականացվել է միացման պայմանագիր կնքելու առաջարկ և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու փուլերի համար, իսկ 01.07.2017 թ.-ից հետո՝ էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու և փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովելու փուլերի համար: Տեղեկանքում փուլերի անվանումները նշված են ներկայումս գործող կարգավորումներին համապատասխան:

2.1 Էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի կնքման գործընթացի վերլուծություն

2017 թվականի ընթացքում Պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացվել 5 760 դիմողների, որի շուրջ 66%-ը ՀՀ մարզերում (Գծապատկեր 3):

Գծապատկեր 3

Էլեկտրական ցանցին միացման գործընթացը 2017թ.



Հարկ է նշել, որ 2017 թվականի ընթացքում Պայմանագիր կնքելու առաջարկություն ստացած դիմողների քանակն արտացոլում է 2010-2017 թվականների ընթացքում էլեկտրական ցանցին միացման դիմում ներկայացրած պատվերների վերաբերյալ տեղեկատվությունը:

2017 թվականի ընթացքում ներկայացված Պայմանագիր կնքելու առաջարկությունների ժամկետների վերլուծությունը ցույց տվեց, որ.

- 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Պայմանագիր կնքելու առաջարկություն չեն ստացել ընդամենը 5 դիմող, որոնց դեպքում սահմանված ժամկետը նշված ամսաթվի դրությամբ դեռևս չի լրացել:
- Պայմանագիր կնքելու առաջարկություն ստացած 1798 պատվերից 123-ի դեպքում միակողմանի ստորագրված Պայմանագիրը դիմողին ուղարկվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո:

Առանձին վերլուծություն է իրականացվել սահմանված ժամկետը լրանալուց հետո Պայմանագիր ստացած դիմողների տարանջատման ուղղությամբ, որի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Պայմանագրի կնքման առաջարկություն ներկայացնելու ժամկետների վերաբերյալ

Լարման մակարդակը, միացման տեսակը	Սահմանված ժամկետները լրանալու դեպքերի քանակը, հատ	
	Պայմանագիր չստացած պատվերներ	**Պայմանագիրը սահմանված ժամկետը լրանալուց հետո ստացած պատվերներ**
0.22 կՎ լարմամբ պարզեցված միացումներ[2]	3	4
0.22 կՎ լարմամբ միացումներ նախագծերով	0	7
0.4 կՎ լարմամբ պարզեցված միացումներ[2]	0	9
0.4 կՎ լարմամբ միացումներ նախագծերով (մինչև 30 կՎԱ հզորություն)	1	16
0.4 կՎ լարմամբ միացումներ նախագծերով (30 կՎԱ-ից բարձր հզորություն)	0	6
6(10) կՎ լարմամբ միացումներ	0	53
35 կՎ լարմամբ միացումներ	0	0
110 կՎ լարմամբ միացումներ	0	0
Պահուստային սնուցման միացումներ	0	10
Բազմաբնակարան շենքերի միացումներ	1	18
ԸՆԴԱՄԵՆԸ	**5**	**123**

[2] Սպառման համակարգն էլեկտրական ցանցին 0,22 կՎ և 0,4 կՎ լարմամբ, մինչև 30 կՎԱ հզորությամբ միացում, երբ հողային աշխատանքների իրականացում չի պահանջվում:

Հարկ է նշել, որ ի տարբերություն նախորդ տարվա, ընկերությունը զգալի բարելավել է Պայմանագիր կնքելու գործընթացը: Նախորդ տարեվերջի դրությամբ չմիացված դիմողների մասով արձանագրվել էր 237 դեպք, երբ սահմանված ժամկետը լրանալուց հետո դիմողը չի ստացել Պայմանագիրը, որից 73 դեպքը Ընկերության ներքին գործընթացների[3] թերի կազմակերպման արդյունքում, իսկ 2017 թվականի տարեվերջի դրությամբ Պայմանգիր չստացած դիմողների մասով նմանօրինակ դեպքերը բացակայում են:

Հաշվի առնելով, որ Տեղեկատվություն 1-ում ներկայացվում են 2008 թվականի փետրվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը էլեկտրական ցանցին միանալու դիմում ներկայացրած և հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ Պայմանագիր կնքելու առաջարկություն չստացած դիմումները, վերլուծության ընթացքում ուսումնասիրվել են Ընկերության կողմից էլեկտրական ցանցին միացման դիմումը ստանալուց մինչև դիմող անձանց Պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնելու, ինչպես նաև նախագծման փաստացի ժամկետները:

Պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնելու փաստացի ժամկետների վերլուծության արդյունքները ներկայացված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնելու փաստացի ժամկետների վերաբերալ

№	Լարման մակարդակ	Նվազագույն ժամկետ (օր)	Միջին ժամկետ (օր)	Առավելագույն ժամկետ (օր)	Դիտարկված պատվերների քանակ (հատ)
1	0.22 կՎ լարման ցանցին միացվող սպառողներ	0	5,9	1043	4611
1,1	*Պարզեցված*	*0*	*4*	*796*	*3925*
1,2	*Նախագծով*	*0*	*15*	*1043*	*686*
2	0.4 կՎ լարման ցանցին միացվող սպառողներ	0	27	1781	2200
2,1	*Պարզեցված*	*0*	*16*	*1781*	*690*
2,2	*Նախագծով*	*0*	*32*	*1217*	*1510*

[3] Բիզնես գործընթացներ են, որոնք իրականացվում են կամ կարող են իրականացվել Ընկերության ուժերով և վերջինս կրում է դրա իրականացման պատասխանատվությունը:

3	6(10) կՎ լարման ցանցին միացվող սպառողներ	0	144	1702	731
3,1	*Պարզեցված*	*0*	*265*	*1702*	*278*
3,2	*Նախագծով*	*0*	*69*	*1420*	*453*
4	Բազմաբնակարան շենք	0	213	1557	117
4,1	*Պարզեցված*	*-*	*-*	*-*	*0*
4,2	*Նախագծով*	*0*	*213*	*1557*	*117*
5	Երկրորդ սնուցում	0	79	1053	125
5,1	*Պարզեցված*	*0*	*3*	*33*	*33*
5,2	*Նախագծով*	*0*	*106*	*1053*	*92*

Նախագծման աշխատանքների նախապես սահմանված ժամկետների և փաստացի ժամկետների համադրության արդյունքում պարզվել է, որ նախագծի կազմման ժամկետը պահպանվել է 1 320-ից 455-ի դեպքում, իսկ 841-ի դեպքում նախագծման փաստացի ժամկետը գերազանցել է սահմանվածը: Նշված ժամկետների վերլուծության արդյունքները ներկայացված են Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Նախագծման ժամկետների վերաբերյալ

Պատվերների քանակ (հատ)	**Նախագծման ժամկետի գերազանցում (անգամ)**
486	Մինչև 2
288	2-10
67	10-ից ավելի

2.2 Փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովելու գործընթացի վերլուծություն

2017 թվականի ընթացքում փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովված սպառման համակարգերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Գծապատկեր 3-ում:

Գծապատկեր 3

Փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովելու գործընթացը, 2017թ.



Գծապատկեր 3-ում արտացոլվում է 2010-2017 թվականների ընթացքում էլեկտրական ցանցին միացման դիմում ներկայացրած և 2017 թվականի ընթացքում փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովված պատվերների վերաբերյալ տեղեկատվությունը:

Փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովելու ժամկետների վերլուծությունը ցույց տվեց, որ 967 դեպքում դիմողը փաստացի էլեկտրամատակարարումը դեռևս չի ապահովվել, որից 186 դեպքում լրացել է դիմողին էլեկտրամատակարարմամբ ապահովելու սահմանված ժամկետը: Նշված դեպքերի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովելու սահմանված ժամկետները լրանալու դեպքերը

Լարման մակարդակը, միացման տեսակը	Սահմանված ժամկետը լրանալու դեպքերի քանակը, հատ	
	Փաստացի էլեկտրամատակարարմամբ չապահովված պատվերներ	**Փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովելու սահմանված ժամկետը լրացած պատվերներ**
0.22 կՎ լարմամբ պարզեցված միացումներ	255	33
0.22 կՎ լարմամբ միացումներ նախագծերով	110	31
0.4 կՎ լարմամբ պարզեցված միացումներ	38	6
0.4 կՎ լարմամբ այլ միացումներ	228	45
6(10) կՎ լարմամբ միացումներ	217	60
35 կՎ լարմամբ միացումներ	0	0
110 կՎ լարմամբ միացումներ	0	0
Պահուստային սնուցման միացումներ	27	7
Բազմաբնակարան շենքերի միացումներ	32	4
ԸՆԴԱՄԵՆԸ	**967**	**186**

Վերլուծության ընթացքում առանձին ուսումնասիրություն է իրականացվել փաստացի էլեկտրամատակարարմամբ չապահովված պատվերների մասով, Որոշում 2-ով սահմանված ժամկետները լրանալուց հետո էլեկտրամատակարարմամբ չապահովելու պատճառների տարանջատման նպատակով: Վերլուծության արդյունքները ներկայացված են Աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

Փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովման սահմանված ժամկետները լրանալուց հետո էլեկտրամատակարարմամբ չապահովելու պատճառները

Փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովման ժամկետները լրանալուց հետո էլեկտրամատակարարմամբ չապահովելու պատճառը	Փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովման ժամկետները լրանալուց հետո էլեկտրամատակարարմամբ չապահովելու դեպքերի քանակը, հատ		
	ՀՀ	**Երևան**	**Մարզեր**
Դիմող անձը չի վճարել միացման վճարը	8	1	7
Դիմող անձը չի ներկայացրել սահմանված փաստաթղթերը	19	14	5
Ընկերության ներքին գործընթացների թերի կազմակերպման արդյունքում	0	0	0
Պետական կամ ՏԻ մարմինների գործունեությամբ պայմանավորված	7	7	0
Այլ (դիմողի հետ կնքվել է համաձայնագիր՝ նոր ժամկետ սահմանելու մասին)	149	78	71
Դիմող անձը հրաժարվել է	**3**	**1**	**2**
ԸՆԴԱՄԵՆԸ	**186**	**101**	**85**

Ինչպես երևում է Աղյուսակ 5-ից, Ընկերության կողմից փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովման Որոշում 2-ով սահմանված ժամկետները լրանալուց հետո էլեկտրամատակարարմամբ չապահովելու դեպքերի գերակշիռ մասի՝ 81%-ի, դեպքում դիմող անձանց հետ կնքվել են լրացուցիչ համաձայնագրեր՝ սահմանված ժամկետի երկարաձգման վերաբերյալ:

Հարկ է փաստել, որ 2017 թվականի տարեվերջի դրությամբ փաստացի էլեկտրամատակարարմամբ չապահովված դիմողների մասով Ընկերության ներքին գործընթացների թերի կազմակերպման արդյունքում սահմանված ժամկետները լրանալուց հետո էլեկտրամատակարարմամբ չապահովելու դեպքերը բացակայում են:

Գծապատկեր 4-ում ներկայացված է դիմող անձանց փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովման սահմանված ժամկետները լրանալուց հետո էլեկտրամատակարարմամբ չապահովելու դեպքերի քանակական համադրությունն ըստ պատճառների:

Գծապատկեր 4

Սահմանված ժամկետները լրանալուց հետո փաստացի էլեկտրամատակարարմամբ չապահովվելու դեպքեր

2016, 2017թթ.



Ինչպես տեսնում ենք Գծապատկեր 4-ից Ընկերությունը զգալի բարելավել է փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովման գործընթացը: Նախորդ տարվա համեմատ փաստացի էլեկտրամատակարարմամբ չապահովելու դեպքերը 70%-ով նվազել են, իսկ 2017 թվականի տարեվերջի դրությամբ փաստացի էլեկտրամատակարարմամբ չապահովված դիմողների մասով ընկերության ներքին գործընթացներով պայմանավորված խախտումները բացակայում են:

Ինչպես 1-ին փուլի համար բաժին 2.1-ում, այնպես էլ փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովման փուլի համար ուսումնասիրվել են փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովման փաստացի ժամկետները, որի արդյունքները ներկայացված են Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6

Փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովելու փաստացի ժամկետների վերաբերալ

№	Լարման մակարդակ	Նվազագույն ժամկետ (օր)	Միջին ժամկետ (օր)	Առավելագույն ժամկետ (օր)	Դիտարկված պատվերների քանակ (հատ)
1	0.22 կՎ լարման ցանցին միացվող սպառողներ	0	40,1	1013	3561
1,1	*Պարզեցված*	*0*	*32*	*965*	*3078*
1,2	*Նախագծով*	*1*	*90*	*1013*	*483*
2	0.4 կՎ լարման ցանցին միացվող սպառողներ	0	97	1034	1563
2,1	*Պարզեցված*	*0*	*40*	*663*	*544*
2,2	*Նախագծով*	*0*	*127*	*916*	*1019*
3	6(10) կՎ լարման ցանցին միացվող սպառողներ	2	362	1790	352
3,1	*Պարզեցված*	*2*	*511*	*1790*	*130*
3,2	*Նախագծով*	*7*	*275*	*1438*	*222*
4	Բազմաբնակարան շենք	74	383	1816	54
4,1	*Պարզեցված*	*-*	*-*	*-*	*0*
4,2	*Նախագծով*	*74*	*383*	*1816*	*54*
5	Երկրորդ սնուցում	0	119	632	60
5,1	*Պարզեցված*	*0*	*41*	*164*	*25*
5,2	*Նախագծով*	*45*	*176*	*632*	*35*

Վերլուծության ընթացքում ուսումնասիրվել են առանց համապատասխան միացման վճարի գանձման՝ էլեկտրական ցանցին միացման դեպքերը: Մասնավորապես, Հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» №307Ն որոշման համաձայն, սկսած 2011 թվականի հոկտեմբերի 1-ից՝ նոր սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման նպատակով դիմող անձը պարտավորվում է վճարել սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարի 50%-ը՝ էլեկտրական ցանցին միացման պայմանագիրը կնքելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում: Միևնույն ժամանակ, համաձայն նույն որոշման՝ միացման վճարի մնացած մասը դիմող անձը պարտավորվում է վճարել էլեկտրամատակարարման աշխատանքների ավարտից առնվազն 5 աշխատանքային օր առաջ: Հարկ է նշել, որ Հանձնաժողովի 2017 թվականի

մայիսի 31-ի №220Ն որոշմամբ կրկին փոփոխություններ են իրականացվել №358-Ն որոշման մեջ: Վերջինիս համաձայն մեկ միասնական փաստաթղթում են ներառվել սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման գործընթացները, իսկ դիմող անձին էլեկտրամատակարարմամբ ապահովելու առավելագույն ժամկետը հաշվարկվում է կանխավճարի վճարման օրվանից, որը դիմող անձը պետք է վճարի միասնական պայմանագրի կնքման օրվանից 24 ամսվա ընթացքում:

Տեղեկատվություն 1-ի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ 2011 թվականի հոկտեմբերի 1-ից 2017 թվականի հունիսի 30-ը (№220Ն որոշումն ուժի մեջ է մտել 2017 թվականի հուլիսի 1-ից) էլեկտրական ցանցին միացման դիմում ներկայացրած և փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովված 15 պատվերների դեպքում էլեկտրական ցանցին միացումն իրականացվել է միացման վճարի գերավճարով, որից 5-ը՝ պահուստային սնուցման ապահովման համար: Այս համատեքստում հարկ է նշել, որ համաձայն Որոշում 2-ի՝ պահուստային սնուցման առկայության դեպքում պահուստային սնուցման միացման վճարը որոշվում է՝ հիմք ընդունելով աշխատանքների նախահաշվային արժեքը, որը աշխատանքների ավարտից հետո ճշգրտվում է՝ ելնելով փաստացի կատարված ծախսերից: **Ուստի, անհրաժեշտ է նշված 5 դիմող անձանց վերադարձնել փաստացի ծախսերի մեծությունը գերազանցող գանձված գումարը՝ այդ մասին տեղեկացնելով Հանձնաժողովին, և մյուս 10 դեպքերի համար ներկայացնել պարզաբանումներ:**

Միևնույն ժամանակ, 100 պատվերի դեպքում միացման վճարը վճարվել է ոչ ամբողջությամբ, որից 75-ի դեպքում փաստացի վճարումը կազմել է միացման վճարի 50%-54%-ը:

Հարկ է նշել նաև, որ Տեղեկատվություն 1-ում առկա՝ Պայմանագիր կնքելու առաջարկություն ստացած անձանցից 393-ը, 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ չեն ստորագրել ներկայացված պայմանագրերը, ինչպես նաև 419 պատվերներ, որոնց դեպքում պայմանագիրը դիմող անձին ներկայացնելու օրվանից անցել է ավելի քան 1 տարի, վերլուծության մեջ չեն ներառվել:

Հանձնաժողովի կողմից մշտապես ուսումնասիրության են ենթարկվում նաև դիմողների կողմից պարբերաբար ներկայացվող դիմում-բողոքները: Վերջիններս մեծամասամբ առնչվում են էլեկտրական ցանցին միացման աշխատանքների

իրականացման ժամկետների խախտումներին: Հանձնաժողովը պարբերաբար մոնիթորինգներ է իրականացնում նշված բողոքների ուսումնասիրության և ժամկետների խախտման պատճառների բացահայտման նպատակով:

Հարկ է նշել, որ մի շարք դեպքերում տեղում ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ միացման աշխատանքներն ավարտված են և սպառման համակարգն արդեն իսկ միացված է էլեկտրական ցանցին, սակայն դիմողները այդ մասին իրազեկված չեն:

Եզրակացություններ և առաջարկություններ

Ամփոփելով՝ կարող ենք փաստել, որ 2017 թվականի ընթացքում էլեկտրական ցանցին միանալու համար դիմել է 5 681 անձ, ինչը շուրջ 6%-ով գերազանցում է 2016 թվականի ցուցանիշը: Նույն ժամանակահատվածում փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովվել են՝ 5 096 սպառման համակարգեր, ինչը շուրջ 10%-ով գերազանցում է 2016 թվականի ցուցանիշը:

Եթե նախորդ տարի էլեկտրական ցանցին չմիացված պատվերների մասով շուրջ 47%-ի դեպքում լրացել էր Պայմանագիր կնքելու սահմանված ժամկետը, ապա 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ նշված ժամկետները լրանալու դեպքերը բացակայում են: 2016 թվականին էլեկտրական ցանցին չմիացված պատվերների շուրջ 45%-ի դեպքում լրացել էին փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովելու սահմանված ժամկետները, մինչդեռ 2017 թվականի ընթացքում այդ ցուցանիշը նվազել է, կազմելով 10%: Ընդ որում բոլոր սահմանված ժամկետը լրանալուց հետո փաստացի էլեկտրամատակարարմաբ չապահովելու դեպքերը պայմանվորված են արտաքին գործոններով[4] և Ընկերության ներքին գործընթացների թերի կազմակերպման արդյունքում էլեկտրամատակարարմաբ չապահովելու դեպքերը չմիացված պատվերների մասով տարեվերջի դրությամբ հասցվել են զրոյի:

Բերված ցուցանիշները վկայում են, որ Ընկերությունը զգալի բարելավել է էլեկտրական ցանցին միացման գործընթացի կազմակերպումը:

Հաշվի առնելով դիմողներից ստացված բողոքների ուսումնասիրության արդյունքները, անհրաժեշտ է աշխատանքներ իրականացնել դիմողների իրազեկվածության բարձրացման և ծանուցման պատշաճ ձևերի մշակման ուղղությամբ:

Հարկ է նշել, որ Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը, գործունեության լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում հանձնաժողովն իրավասու է տալու խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ և կարող է կիրառել տուժանքներ: Մասնավորապես 2017 թվականի ընթացքում Ընկերությունը տուգանվել է 10 մլն դրամի չափով՝ Ընկերության կողմից դիմող անձանց ներկայացված նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող

[4] Բիզնես գործընթացներ են, որոնք կախված չեն Ընկերության գործունեության հետ, օրինակ՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվություններ կամ փաստաթղթեր, դիմող անձի պարտավորությունների կատարում և այլն:

սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման պայմանագրերը 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված միացման պայմանագրի օրինակելի ձևին չհամապատասխանելու և նույն որոշմամբ սահմանված էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 13.5 կետով սահմանված նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման առավելագույն ժամկետների խախտման համար:

Նոր սպառողների էլեկտրական ցանցին միացման գործընթացի կազմակերպման և իրականացման աշխատանքներն առավելագույնս արդյունավետ իրականացնելու ուղղությամբ տարվող աշխատանքները պետք է լինեն հետևողական և շարունակական՝ հետագայում ևս դրական արդյունքներ արձանագրելու նպատակով:

Հղումներ օգտագործված նյութերին

Որոշում 1 -	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 13-ի «ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» №540Լ որոշում.
Որոշում 2 -	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» №358Ն որոշում.
Որոշում 3 -	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարները հաստատելու մասին» №659Ն որոշում.
Տեղեկատվություն -	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 6-ի «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացի իրականացման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման կարգը հաստատելու մասին» №199Ա որոշմամբ սահմանված կարգով ներկայացվող եռամսյակային տեղեկատվություն
Տեղեկատվություն 1 -	նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացի վերաբերյալ Ընկերության ներկայացրած ընդլայնված տեղեկատվություն